

Newsletter

Delegation of the European Union to Armenia

November 2011 #6(11)

Focus On/խոշոր պլան

On the path towards European rapprochement



On 26 October the 7th round of negotiations on the Association Agreement took place in Yerevan. During this round of political dialogue, foreign policy, security and freedom, as well as economic and financial issues, were

discussed. At the press conference held on 27 October at the Ministry of Foreign Affairs, the chief Armenian negotiator, Zohrab Mnatsakanyan, stated that one more chapter of the future Association Agreement, related to tax legislation,

had been closed. Therefore, the number of negotiated and provisionally closed chapters is now 19. Mnatsakanyan also declared that there had been progress in relation to preparing for negotiations on a Deep and Comprehensive Free Trade Area (DCFTA). The chief EU negotiator, Gunnar Wiegand, welcomed the acceleration of reform implementation in diverse domains in Armenia. He added that more efforts were still necessary for Armenia to move closer to EU standards. The start of negotiations on visa facilitation and readmission agreements in the very near future was also discussed.

Note:

On 27 October in Luxembourg the Armenian Minister of Foreign Affairs, Edward Nalbandian, the EU Commissioner for Internal Affairs, Cecilia Malmström, and the Ministers of Internal Affairs of the EU member-states signed a Joint Declaration on a Mobility Partnership between Armenia and the EU.

Եվրոպական մերձեցման ճանապարհին

Հոկտեմբերի 26-ին Երևանում կայացել է Ասոցացման համաձայնագրի բանակցությունների 7-րդ նիստը, որի ընթացքում քննարկվել են քաղաքական երկխոսության, արտաքին քաղաքականության, անվտանգության և ազատության, ինչպես նաև տնտեսական և ֆինանսական հարցեր:

ԱԳՆ-ում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ հայկական կողմի գլխավոր բանակցող Ջոհրաբ Մնացականյանը նշել է, որ համաձայնեցված է ապագա Ասոցացման պայմանագրի և մեկ գլուխ, որը վերաբերում է հարկային օրենսդրությանը: Այսպիսով, քննարկված և պայմանականորեն փակված գլուխների թիվն արդեն 19 է: Մնացականյանը նշել է նաև, որ առաջընթաց կա խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) բանակցությունների նախապատրաստման գործընթացում: ԵՄ կողմի հիմ-

նական բանակցող Գուննար Վիգանդը ողջունել է այն փաստը, որ Հայաստանը զգալիորեն արագացրել է տարբեր բնագավառներում բարեփոխումների քաղաքականությունը, բայց և ավելացրել, որ դեռ շատ անելիքներ կան ԵՄ-ի չափանիշներին ընդառաջ գնալու ճանապարհին:

Խոսվել է նաև մոտ ապագայում մուտքի արտոնագրերը դուրսացնող համաձայնագրի շուրջ բանակցությունների մեկնարկի մասին:

Նշում.

Հոկտեմբերի 27-ին Լյուքսեմբուրգում արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը, ԵՄ ներքին գործերի հանձնակատար Սեսիլիա Մալմստրոմը և ԵՄ անդամ երկրների ներքին թե արտաքին գործերի նախարարները ստորագրել են Հայաստան - ԵՄ «Գործընկերություն՝ շարժունակության շուրջ» հռչակագիրը:

Catherine Ashton visits Armenia

On 15-17 November the High Representative of the European Union for Foreign Affairs and Security Policy Catherine Ashton paid regional visits to Azerbaijan, Georgia and Armenia.

During the briefing held in Yerevan on 17 November Catherine Ashton welcomed the European integration process implemented in Armenia. According to the HRVP, despite the crisis in the euro zone, EU support to reforms in Armenia will continue. The

negotiations on a Deep and Comprehensive Free Trade Area Agreement will start once the necessary conditions have been completed, and this important process can contribute to economic progress in Armenia. In connection with visa facilitation negotiations, HRVP Ashton said that these are expected to start soon. The upcoming parliamentary and presidential elections, the Nagorno Karabakh conflict, as well as Armenian-Turkish relations were also discussed.



Քեթրին Էշտոնն այցելեց Հայաստան

Նոյեմբերի 15-17-ը ԵՄ արտաքին և քաղաքականության գերագույն հանձնակատար Քեթրին Էշտոնը տարածաշրջանային այցով եղել է Ադրբեյջանում, Վրաստանում և Հայաստանում:

Նոյեմբերի 17-ին Երևանում տեղի ունեցած ճեպագրույցի ժամանակ Քեթրին Էշտոնը ողջունեց Հայաստանում իրականացվող եվրամիտացման գործընթացները: Ըստ Գերագույն հանձնակատարի՝ անկախ եվրագոտու ճգնաժամից՝ ԵՄ-ն կշարունակի աջակցություն տրամադրել Հայաստանում բարեփոխումների իրականացման համար: Խոր և համապար-

փակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) շուրջ բանակցությունները կմեկնարկեն բոլոր նախապայմաններն իրագործելուց անմիջապես հետո, և այս կարևոր գործընթացը կարող է նպաստել Հայաստանի տնտեսական զարգացմանը: Վիզաների տրամադրման գործընթացի դուրսացման կապակցությամբ Գերագույն հանձնակատար Էշտոնն ասել է, որ բանակցությունները կմեկնարկեն առաջիկայում: Քննարկվել են նաև Հայաստանում կայանալիք խորհրդարանական և նախագահական ընտրությունները, դարաբաղային հարցը և հայ-թուրքական հարաբերությունները:

EU-Armenia parliamentary cooperation

The EU-Armenia Parliamentary Cooperation Committee (PCC) is a framework for coordinating the cooperation of the Armenian National Assembly with the European Parliament.

On 2-3 October the 12th meeting of the EU-Armenia Parliamentary Cooperation Committee was held. The committee paid special attention to topics such as the Nagorno-Karabakh conflict, Armenia-Turkey relations and the upcoming Armenian parliamentary and presidential elections. The co-chairpersons, Milan Cabmoch and Naira Zohrabyan, summarised the committee's efforts during a press conference on 3 October. Milan Cabmoch stated that the EU had supported ongoing negotiations on Nagorno-Karabakh within the scope of the OSCE Minsk Group mandate. The EU representative also announced that the EU would give assistance not only in the implementation of free elections, but also in building the perception of fair and free elections within society.

The Deputy Minister of Foreign Affairs, Zohrab Mnatsakanyan, the Head of the Political, Economic, Press and Information Section at the EU Delegation to Armenia, Onno Simons, representatives of different political powers and six deputies from the European Parliament participated in the meeting.



ԵՄ-Հայաստան խորհրդարանական համագործակցության հանձնաժողովը (PCC) համակարգում է Հայաստանի Ազգային ժողովի և Եվրախորհրդարանի միջև համագործակցությունը:

Նոյեմբերի 2-3-ը տեղի է ունեցել Հայաստան-Եվրամիություն խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի 12-րդ նիստը: Հանձնաժողովը անդրադարձել է

ԵՄ-Հայաստան խորհրդարանական համագործակցության

այնպիսի թեմաների, ինչպիսիք են Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, հայ-թուրքական հարաբերությունները և Հայաստանի առաջիկա խորհրդարանական ու նախագահական ընտրությունները: Համաձայնագրեր Միլան Ցաբրնոխը և Նաիրա Ջոհրաբյանն ամփոփել են հանձնաժողովի աշխատանքները նոյեմբերի 3-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ: Միլան Ցաբրնոխը հայտնել է, որ ԵՄ-ն սատարում է ԵԱՀԿ Մինսկի խմբի մանդատի շրջանակում ընթացող բանակցությունները Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ: ԵՄ ներկայացուցիչը ասել է նաև, որ ԵՄ-ն իր աջակցությունը կցուցաբերի ոչ միայն ընտրությունների՝ հնարավորինս արդար միջավայրում անցկացման, այլև հանրության կողմից արդար և ազատ ընտրությունների գաղափարի ընկալման նպատակով:

Նիստին մասնակցել են ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Ջոհրաբ Մնացականյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության քաղաքական, տնտեսական, մամուլի և տեղեկատվության բաժնի ղեկավար Օնո Սիմոնը, Հայաստանի տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչներ, ինչպես նաև Եվրախորհրդարանի 6 պատգամավոր:

Հաղորդագիր

Եվրոպական միության պատվիրակությունը Հայաստանում

Նոյեմբեր 2011 #6(11)

Reconciliation

On 21 October the stage of the Nationwide Theatre in Yerevan was the scene of an effort to overcome geographical borders. The play *Descendants*, written by Turkish playwright Sedef Ecer, which has been performed in five languages, was performed before an Armenian audience.

The performance has been brought to life by the Rec>ON (Reconciliation) project and is being implemented in 4 countries: Armenia, Turkey, Germany and France. The aim was to overcome geographical, historical and psychological borders through the play and to think about reconciliation.

"As a director, I am always interested in geopolitical topics which can be performed on stage", said the director of *Descendants*, Bruno Freyssinet, during the press conference before the play.

Ecer presents torturers, victims and witnesses, as well as their descendants. "I was more interested in the feelings and sufferings that remained after the Genocide both in the torturer and in the victim. The protagonists of the play are silence and lies which spring from the past... I know, that the play will be perceived differently in all the different countries, but I am sure that the sharpest debate will be evoked in Turkey", Ecer declared.

The project will be also implemented in



member states starting from January 2011 up until the first months of 2012. After being performed in Armenia *Descendants* will also be staged in France, Turkey and Germany.

The project is financed by the European Union (€200,000) and implemented by French organisation La Transplanisphere and the National Theatre in association with German Förderband Kulturinitiative Berlin and Turkish Anadolu Kultur organisations.

Հաշտեցում

Հոկտեմբերի 21-ին Երևանում՝ Համագ-գային թատրոնի բեմում փորձ է արվել հաղթահարելու աշխարհագրական սահ-մանները: Հայ հանդիսատեսի դատին է հանձնվել ազգությամբ թուրք սցենարիստ Սեդեֆ Էսերի հեղինակած «Ժառանգնե-րը» պիեսը, որը բեմադրվել է հինգ լեզու-ներով:

Ներկայացումը կյանքի է կոչվել Rec>ON (Reconciliation-հաշտեցում) նախագծի կողմից, որն իրականացվում է 4 երկրում՝ Հայաստանում, Թուրքիայում, Գերմա-նիայում և Ֆրանսիայում: Պիեսը փորձել է արվել հաղթահարել աշխարհագրական, պատմական և հոգեբանական սահման-ները և մտածել հաշտության մասին:

«Որպես բեմադրիչ, ես միշտ հետա-քրքրվում եմ աշխարհաքաղաքական այնպիսի թեմաներով, որոնք կարելի է արծարծել բեմի վրա», - ներկայացմանը նախորդած մամուլի ասուլիսի ժամանակ ասել է ծրագրի ղեկավար և «Ժառանգնե-րը» պիեսի ռեժիսոր Բրունո Ֆրեյսինեթը:

Սեդեֆ Էսերն իր պիեսում ներկայաց-նում է թե՛ դահիճներին, զոհերին ու վկա-ներին և թե՛ նրանց ժառանգներին: «Ինձ առավել հետաքրքրում էր՝ որոնք էին մարդկանց պարուրող այն զգացողու-թյուններն ու պարունները, որոնք մնացել են ցեղասպանությունից հետո թե՛ դահիճի մոտ և թե՛ զոհի»,- ասել է Էսերը:

«Պիեսի ամենակարևոր կերպարը լու-

թյունն է և այն կեղծիքը, որ եկել է անցյա-լից... Գիտեմ, որ պիեսը յուրաքանչյուր երկրում տարբեր կերպ կընկալվի, բայց և վստահ եմ, որ այն ամենասուր բանավե-ճերը կառաջացնի Թուրքիայում», - ասել է հեղինակը:

REC ON ծրագիրը կիրականացվի նաև Եվրոպայի գործընկեր երկրներում 2011թ. հունվարի սկզբից մինչև 2012թ. առաջին ամիսները: Հայաստանյան ցուցադրությունից հետո «Ժառանգնե-րը» կներկայացվի նաև Ֆրանսիայում, Թուրքիայում և Գերմանիայում:

Քաղաքացիական համագործակցու-թյան հնարավորություն ստեղծող այս նա-խագիծը բեմադրիչ Բրունո Ֆրեյսինեթի, սցենարիստ Սեդեֆ Էսերի և ֆրանսահայ դերասան-բեմադրիչ Սերժ Ավետիսյանի համատեղ աշխատանքի արդյունքն է: Ի դեպ, Սերժ Ավետիսյանն այժմ նկարա-հանում է վավերագրական ֆիլմ ներկա-յացման ստեղծման մասին:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվ-րոպական միության կողմից (200.000 եվրո), և իրականացվում՝ ֆրանս-սիական (La Transplanisphere) և տրանսպլանիսֆեր ընկերության և Համագային թատրոնի կողմից, ինչ-պես նաև գերմանական Förderband Kulturinitiative Berlin և թուրքական Anadolu Kultur կազմակերպություննե-րի համագործակցությամբ:

Model European Union 2011

On 21 October the "Model European Union 2011" conference was held in Armenia.

The principal objective was to raise youth awareness of the EU and to foster active participation in political issues. 35 young participants, selected from different Armenian regions, examined EU legislation and were acquainted with European integration and enlargement policies with the help of experts over a week-long period. During the conference, participants represented the 27 EU member states and its partner countries as Heads of State. The representative of each country expressed pressing issues in each country encompassing a wide range of topics and proposed relevant solutions. These discussions also provided participants with the possibility to improve their negotiating skills.

19-year old Gor Nazaryan, representing Iceland, said that for him, as future diplomat, this was a great opportunity to examine over a few weeks the interests of the country and make decisions.

The conference was organized for the first time in Armenia by the AEGEE-Yerevan/ European Students' Forum and supported by the EU Delegation to Armenia.

Եվրոպական միության մոդել 2011

Հոկտեմբերի 21-ին առաջին անգամ Հա-յաստանում անց է կացվել «Եվրոպական միության մոդել 2011» խորհրդաժողովը:

Այն նպատակ էր հետապնդում երի-տասարդության շրջանում բարելավելու Եվրամիության մասին գիտելիքները և խթանելու նրանց ակտիվությունը քաղա-քական հարցերում: Հանրապետության տարբեր մարզերից ընտրված 35 երիտա-սարդ մասնակիցներ խորհրդաժողովին նախորդած երկու շաբաթվա ընթացքում մասնագետների օգնությամբ ուսումնասի-րել են ԵՄ օրենսդրական ընթացակարգե-րը և ծանոթացել Եվրոպական ինտեգրա-ցիայի և ընդլայնման քաղաքականությա-նը: Խորհրդաժողովի ժամանակ մասնա-կիցների մի մասը հանդես է եկել ԵՄ 27 անդամ պետությունների նախագահների դերում, մյուս մասը՝ որպես գործընկեր պետությունների ղեկավարներ: Յուրա-քանչյուր երկրի ներկայացուցիչ արտա-հայտել է այդ երկրին մտահոգող խնդիր-ները տարբեր ոլորտներում և առաջարկել որոշակի լուծումներ: Քննարկումների շնորհիվ մասնակիցները հնարավորու-թյուն են ստացել զարգացնելու նաև բա-նակցային հմտություններ:

Իսլանդիան ներկայացնող 19-ամյա Գոր Նազարյանի խոսքերով՝ որպես ապագա դիվանագետի՝ իր համար հիանալի հնա-



րավորություն էր մի քանի շաբաթ մանրա-մասնորեն ուսումնասիրել տվյալ երկրի շահերը և որոշումներ կայացնել:

Խորհրդաժողովը կազմակերպել էր AEGEE-Երևան ուսանողների ֆորում երի-տասարդական կազմակերպությունը՝ Հա-յաստանում ԵՄ պատվիրակության աջակ-ցությամբ:

Reforming customs

Armenian customs reforms are key preconditions for the development of economic and business sectors, as well as for the start of negotiations on a Deep and Comprehensive Free Trade Area Agreement (DCFTA). During a conference held on 12 October, progress and future actions in this field were discussed. The EU Delegation to Armenia, the EU Advisory Group and the Interagency Commission for the Coordination of Cooperation between Armenia and EU Institutions participated in the conference.

The different sides stated that the simplification of customs procedures based on EU standards and proper policy design

would have a positive influence on the Armenian economy and promote foreign investment in Armenia.

The recently established Customs Working Group plays an important role in the resolution of customs issues. It is expected to ensure the integration and comprehensiveness of reform programmes and their seamless delivery, as well as provide advice on customs activities. The 2011-2013 Tax and Customs Reforms programme, designed with advice by EU experts, spans over 118 projects.

However, the greatest potential for progress in customs services is seen within the implementation of programmes which modernise border crossing points and border security.



Մաքսային բարեփոխումներ

Հայաստանում մաքսային ոլորտի բա-րեփոխումները տնտեսական, բիզնես միջավայրի բարելավման, այդ թվում նաև խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի (ԽՀԱԱՀ) շուրջ բանակցությունների մեկնարկի կարևորագույն նախապայմաններից են: Ոլորտում գրանցված առաջընթացն ու հետագա քայլերը քննարկվել են հոկ-տեմբերի 12-ին կայացած աշխատաժո-ղովի ընթացքում, որին մասնակցում էին Հայաստանում ԵՄ պատվիրակությունը, ԵՄ խորհրդատվական խումբը և Եվրո-պական կառույցների հետ ՀՀ պետա-կան մարմինների համագործակցությու-նը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովը:

Կողմերը մասնավորապես արձանագ-րել են, որ ԵՄ չափանիշներին համապա-տասխան մաքսային ընթացակարգե-րի պարզեցումը և քաղաքականության

ճշգրիտ մշակումը դրական ազդեցությու-ն կունենան Հայաստանի տնտեսության վրա, և որ ամենակարևորն է՝ կյանախուսեմ դեպի Հայաստան ներդրումները:

Մաքսային խնդիրների լուծման գործում մեծ դեր ունի վերջերս ձևավորված մաքսա-յին հարցերով զբաղվող աշխատանքային խումբը: Այն ապահովելու է բարեփոխման ծրագրերի միասնականությունն ու համա-պարփակությունը և նպաստելու է դրանց սահուն իրականացմանը, տրամադրելու է խորհրդատվություն մաքսային միջոցա-ռումների ուղղությամբ: ԵՄ փորձագետների կողմից մշակված 2011-2013թթ. հարկային և մաքսային ոլորտների բարեփոխումների ծրագիրը նախատեսում է 118 միջոցառում:

Այդուհանդերձ, մաքսային համակարգում կարևորագույն առաջընթացներից կլինի սահմանային անցակետերի արդիակա-նացումը և սահմանային անվտանգության ծրագրերի իրագործումը:

Media today

Television, press, the Internet, personal blogs, Facebook, Twitter...with such an impressive flow of information, the need for and importance of high-quality and reliable information has increased more than ever. To boost discussion on new and traditional media, the second EU-Armenia Civil Society Seminar on Human Rights was held in Tsaghkadzor on 8-9 November, concentrating on the topic of "Media today".

In the context of Armenia's upcoming parliamentary and presidential elections, the seminar discussed the impact of media on the electoral process. "Free media are key to successful reform and to free and fair elections," said the Acting Head of the EU delegation to Armenia, Onno Simons. The EU has encouraged Armenia over the years to make its recently-amended legislation on media fully in line with international standards, which would ensure media pluralism in the country. Talking about the electoral code which entered into the force in summer 2011, the representative of the International Foundation for Electoral Systems (IFES) in Armenia, Michael Getto, stated that its legal base had improved sufficiently.

Numerous other issues including the impact of new technology on media, social media, freedom of expression, the formation of transparent media legislation, professionalism and the quality of information were also discussed.

Լրատվամիջոցներն այսօր

Հեռուստատեսություն, մամուլ, ինտերնետ, անձնական բլոգեր, ֆեյսբուք, թվիթեր... Այսպիսի լայնածավալ տեղեկատվական հոսքի մեջ առավել քան երբևէ մեծացել է որակյալ և վստահելի տեղեկատվության պահանջարկն ու բարձրացել կարևորությունը:

Նոր և ավանդական լրատվամիջոցների շուրջ քննարկումները խթանելու նպատակով նոյեմբերի 8-9-ը Ծաղկաձորում անց է կացվել «Լրատվամիջոցներն այսօր» խորագրով ԵՄ-Հայաստան քաղաքական հասարակության երկրորդ սեմինարը՝ մարդու իրավունքների թեմայով:

Քանի որ Հայաստանը խորհրդարանական և նախագահական ընտրությունների շեմին է սեմինարի ընթացքում քննարկվել է լրատվամիջոցների ազդեցությունը ընտրական գործընթացների վրա: «Ազատ ՁԼՄ-ները ազատ և արդար ընտրությունների ճանապարհն են հարթում», - իր բացման խոսքում նշել է ԵՄ պատվիրակության ղեկավար պաշտոնակատար Օնո Սիմոնը: ԵՄ-ն տարիներ շարունակ խրախուսել է Հայաստանում ՁԼՄ-ների մասին համաշխարհային չափանիշների համաձայն վերջերս փոփոխված օրենսդրությունը, որը երկրում կապահովի լրատվական բազմակարծություն: Իր գեկույցում անդրադառնալով 2011թ.-ի ամռանն ուժի մեջ մտած նոր «Ընտրական օրենսգրքին»՝ Հայաստանում Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (IFES) ներկայացուցիչ Մայքլ Գետոն տեղեկացրել է, որ օրենսդրական հիմքը բավականաչափ բարելավված է:

Քննարկվել են մի շարք այլ հարցեր, այդ թվում՝ նոր տեխնոլոգիաների ազդեցությունը լրատվամիջոցների վրա, սոցիալական մեդիայի, խոսքի ազատության, հստակ օրենսդրության ձևավորման, մատուցվող նյութի բարձր պրոֆեսիոնալիզմի և որակի հետ կապված հարցերը:

Assistance in the migration sector

To raise awareness of EU legislation on migration and to improve the management of migration flows from Armenia to the EU, training on the EU Acquis in Migration was held on 19-20 October.

Free mobility within the EU territory, EU human rights and insurance, and regular and irregular migration issues were discussed during the session, with participation by EU experts Kristina Touzenis and Paola Pace. Initial negotiations on visa facilitation and readmission agreements, as well as bilateral labour agreements, would create a sustainable basis for the implementation of reform in the migration sector, stated the experts.

The training programme was organised by the International Organisation for Migration (IOM) and the International Centre for Human Development NGO within the framework of the EU-funded project "Strengthening Evidence-Based Management of Labour Migration in Armenia" with a budget of €1,950,000.



Աջակցություն միգրացիոն ոլորտում

ԵՄ միգրացիոն օրենսդրության ոլորտին ծանոթանալու և Հայաստանից դեպի ԵՄ միգրացիոն հոսքերի կառավարումը բարելավելու նպատակով հոկտեմբերի 19-ին և 20-ին Երևանում ուսուցում է անցկացվել միգրացիոն ոլորտի ԵՄ համաեվրոպական օրենսդրության (Acquis) վերաբերյալ:

Դասընթացի ժամանակ ԵՄ փորձագետներ Քրիստինա Տուզենիսի և Պաոլա Փեյսի հետ քննարկվել են ԵՄ տարածքում ազատ տեղաշարժին, ԵՄ-ում մարդու իրավունքներին, ապահովագրությանը, անկանոն և կանոնավոր միգրացիային վերաբերող հարցեր: Փորձագետների խոսքերով՝ մոտ ժամանակներում սպասվող վիզային ռեֆորմի դրուստացման և փոխադարձ ընդունման, ճանաչման(ռեադմիսիայի) համաձայնագրերի շուրջ բանակցությունների մեկնարկը, ինչպես նաև երկկողմ աշխատանքային համաձայնագրերի կնքումը ավելի կայուն հիմքեր կստեղծեն միգրացիոն ոլորտում կառավարումը բարելավելու համար:

Դասընթացը իրականացվել է Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) և «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից «Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում» ծրագրի շրջանակներում ԵՄ ֆինանսական օժանդակությամբ՝ 1 950 000 եվրո բյուջեով:

Discussing human rights

With the support of the EU Delegation to Armenia a lecture on "Human rights, democracy and the rule of law as fundamental values of the European Union" was organised at the French University on 28 October.

The French University rector, Joelle Le Morzellec, the Head of Operations of the EU Delegation to Armenia, Jean-Christophe Gayrand, and the Human Rights Defender, Karen Andreasyan, made opening speeches.

The Head of the Centre for European Studies and EU expert, Christian Philip, shared his experience in front of the young audience. He presented the instruments created by Europe in order to protect fundamental values, emphasising the role of the Agency for Fundamental Rights established in 2007, which works closely with other institutions and bodies operating at both the national and European level.

The objective of such lectures organised by the EU is to foster human rights protection in Armenia and to promote observation of European standards in relation to democracy issues.



Քննարկումներ մարդու իրավունքների շուրջ

Հայաստանում ԵՄ պատվիրակության աջակցությամբ հոկտեմբերի 28-ին Ֆրանսիական համալսարանում կազմակերպվել էր դասախոսություն՝ «Մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը որպես Եվրոպական միության հիմնարար արժեք» խորագրով:

Ուղղույնի խոսքով հանդես են եկել Ֆրանսիական համալսարանի ռեկտոր տիկին ժոլե Լը Մորզելեկը, Հայաստանում ԵՄ պատվիրակության գործառնական բաժնի ղեկավար ժան-Քրիստոֆ Գայրանդը և Մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը:

Երիտասարդ լսարանի իր գիտելիքներն ու փորձն է հաղորդել ԵՄ փորձագետ, Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն, Եվրոպական շարժման նախագահ Քրիստիան Ֆիլիպը: Նա ներկայացրել է այն գործիքները, որոնք Եվրոպան ստեղծել է պաշտպանելու համար իր հիմնարար արժեքները: ԵՄ փորձագետն ընդգծել է 2007 թվականին հիմնված Հիմնարար իրավունքների գործակալության դերը, որը սերտորեն համագործակցում է ազգային ու Եվրոպական մակարդակներով գործող մյուս կառույցների հետ:

ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող նմանօրինակ դասախոսությունների նպատակն է խթանել Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությունը և աջակցել Հայաստանին՝ հետևելու ժողովրդավարությանն առնչվող Եվրոպական չափանիշներին:

Unite for children



In order to detect and prevent violence against children, a three-year EU-funded project, "Unite for Children, Save Futures", was launched in 2009. The project develops activities in special schools, orphanages, care centres, public schools, kindergartens and clinics selected from across Armenia.

Within the framework of the project, 26 professional teams have been established in Armenia. They hold classes and undertake awareness-raising and training programmes. "After being trained, the teams carry out training programmes related to violence and parenting, because, as a result of research, it became clear that the majority of violent cases occur due to lack or unawareness of alternatives", commented Anna Harutyunyan, the project manager. The teams consist of not only experts and parents, but also children. 15-year-old Kristine Harutyunyan is a member of the Nor Nork child protection team. On 9 October in school #164 she introduced



children and teachers to different types of violence and preventative mechanisms.

The project manager highlighted the importance of talking about violence, but simultaneously urged caution when writing about particular cases, as it can be easy to cause secondary trauma to a child and his/her family.

The project is implemented by "Save the Children" Armenia country office and is co-financed by the EU and the "Open Society Foundation Armenia". The budget amounts to €793,000. The main components of the programme are developing training skills and abilities of professionals, parents and children through a range of events, media and training courses, as well as the organisation of referral processes, which facilitates work on referral cases, and improving legal frameworks. As a result of the latter, a draft law has been designed and will soon be presented to the National Assembly.

Միավորվենք՝ հանուն երեխաների



Երեխաների նկատմամբ բռնությունը հայտնաբերելու և կանխարգելելու նպատակով ԵՄ աջակցությամբ 2009թ. մեկնարկվել է «Միավորվենք՝ հանուն երեխաների, փրկենք ապագան» եռամյա ծրագիրը: Այն գործունեություն է ծավալում Հայաստանի ողջ տարածքում ընտրված հատուկ դպրոցներում, մանկատներում, խնամքի և պաշտպանության կենտրոններում, հանրակրթական դպրոցներում, մանկապարտեզներում, պոլիկլինիկաներում:

Ծրագրի շրջանակներում հանրապետության տարածքում կազմվել են 26 մասնագիտական թիմեր, որոնք իրականացնում են վերապատրաստման, իրազեկման և ուսումնական աշխատանքներ: «Կազմված մասնագիտական թիմերը վերապատրաստումից հետո իրականացնում են բռնությանն առնչվող տարբեր դասընթացներ, մասնավորապես ծնողավարության թեմայով, քանի որ հետազոտական աշխատանքների արդյունքում պարզվել է, որ բռնությունների մեծ մասը տեղի է ունենում այլընտրանքային լուծումներ չիմանալու պատճառով», - մեկնաբանում է ծրագրի ղեկավար Աննա Հարությունյանը: Հարկ է նշել, որ թիմերը կազմված են ինչպես փորձագետներից և ծնող-

ներից, այնպես էլ՝ երեխաներից: Նոր Նորքի երեխաների պաշտպանության թիմի անդամ է նաև 15-ամյա Քրիստինե Հարությունյանը, որը հոկտեմբերի 9-ին Երևանի հմ.164 դպրոցում երեխաներին և ուսուցիչներին ներկայացրել է տարբեր տեսակի բռնություններ ու դրանց կանխարգելման միջոցները:

Ծրագրի ղեկավարը նշել է բռնության դեպքերի մասին իրազեկման կարևորությունը, միևնույն ժամանակ կոչ անելով լրագրողներին՝ որևէ դեպք լուսաբանելիս զգուշավորություն դրսևորել, քանի որ հեշտությանը կարելի է երկրորդ անգամ վնաս հասցնել երեխային և նրա ընտանիքին:

Ծրագիրն իրականացվում է «Պաշտպանենք երեխաներին» («Save the children») կազմակերպության հայաստանյան գրասենյակի կողմից՝ ԵՄ և «Հայաստանի Բաց հասարակության հիմնադրամ»-ի համաֆինանսավորմամբ: Ընդհանուր բյուջեն կազմում է 793 000 եվրո:

Ծրագրի հիմնական բաղադրիչներն են մասնագետների, ծնողների և երեխաների շրջանում դաստիարակական հմտությունների ու կարողությունների զարգացումը՝ մի շարք միջոցառումների, լրատվամիջոցների, դասընթացների օգնությամբ, կողմնորոշման այնպիսի ընթացակարգերի մշակումը, որոնք կիշտացնեն տվյալ դեպքի հետ կապված աշխատանքները, և կնպաստի իրավական դաշտի կատարելագործմանը: Այս նպատակով ներկայումս մշակվում է «Երեխաների պաշտպանության մասին» օրենքի մի նախագիծ, որն առաջիկայում կներկայացվի Ազգային ժողովի քննարկմանը:



Եվրոպական տնտեսական և սոցիալական կոմիտե

Եվրոպական տնտեսական և սոցիալական կոմիտեն (ԵՏՍԿ, անգլերեն հապավումը՝ EESC) ստեղծվել է 1957 թվականին որպես միասնական շուկային առնչվող հարցերի քննարկման համար նախատեսված համաժողով:

ԵՏՍԿ-ն խորհրդակցական մարմին է, որը Եվրոպայի սոցիալ-մասնագիտական շրջանակների շահերի ներկայացուցիչներին (գործատուներ, արհեստակցական միություններ, ֆերմերներ, սպառողներ և այլն) պաշտոնական հարթակ է տրամադրում ԵՄ հիմնախնդիրների վերաբերյալ իրենց տեսակետներն արտահայտելու համար: Տարեկան կտրվածքով ԵՏՍԿ-ն միջին հաշվով 170 խորհրդատվական փաստաթուղթ և կարծիք է հրապարակում: Բոլոր կարծիքներն ուղարկվում են

ԵՄ-ի որոշումներ կայացնող մարմիններին, ապա հրատարակվում՝ ԵՄ պաշտոնական տեղեկագրում:

Այսպիսով, Եվրոպական տնտեսական և սոցիալական կոմիտեն երեք հիմնական խնդիր է իրականացնում՝

- խորհրդատվություն է տրամադրում Խորհրդին, Հանձնաժողովին և Եվրոպական խորհրդարանին՝ վերջիններիս խնդրանքով կամ սեփական նախաձեռնությամբ:
- խրախուսում է քաղաքացիական հասարակության առավել ակտիվ ներգրավումը ԵՄ քաղաքականության մշակման գործընթացում:
- բարձրացնում է քաղաքացիական հասարակության դերը ԵՄ անդամ չհանդիսացող երկրներում՝ աջակցելով վերջիններիս խորհրդատվական կառույցներ ստեղծելու գործում:

Եվրոպական տնտեսական և սոցիալական կոմիտեն ունի 344 անդամ, ովքեր Եվրոպայի տարբեր սոցիալական և տնտեսական շահեր ներկայացնող խմբերի ներկայացուցիչներ են: Անդամների թեկնածությունն առաջ են քաշում ազգային կառավարությունները, իսկ նշանակում է անդամներին Եվրոպական միության խորհուրդը՝ 5 տարի ժամկետով և վերանշանակման հնարավորությամբ: Անդամների կազմի հերթական նորացումը տեղի է ունեցել 2010 թվականի հոկտեմբերին: Նոր անդամներ իրենց լիազորություններն իրականացնելու են 2010-2015 թվականների ընթացքում: ԵՄ այս կանայն պետությունից առաջադրված անդամների թիվը կախված է տվյալ երկրի բնակչության թվից:

<http://www.eesc.europa.eu/?i=portal.en.about-the-committee>



Վարդերի նեկտար՝ բուլղարական պիտակով

Բուլղարացիները դարձրել են շարունակ աճեցրել ու մշակել են վարդի թերթիկներ, քանել դրանց աստվածային նեկտարն ու ստացել ողջ աշխարհում լավագույններից համարվող բուլղարական վարդի եթերային յուղը:

Բուլղարիան արտադրում է աշխարհում օժանելիքի, դեղագործության և սննդային արդյունաբերության մեջ օգտագործվող վարդի յուղի 90 տոկոսը՝ տարեկան 1,3-1,5 տոննա: Հումքի ծավալը պատկերացնելու համար նշենք, որ 1 գրամ վարդի յուղ ստանալու համար անհրաժեշտ է մշակել մոտ 1300 վարդի գլխիկ: Իսկ ծաղկահավաքը իրականացվում է խիստ արարողակարգով. վարդի թերթիկները հավաքում են միայն կանայք, մայիս-հունիս ամիսներին՝ վաղ առավոտյան ժամը 5-ից մինչև 10-ն ընկած ժամանակահատվածում:

Այսօր արդեն Բուլղարիայի բնակիչներն իրենց կյանքն առանց վարդերի չեն պատկերացնում, և զարմանալի չէ, որ այստեղ է անցկացվում աշխարհում միակ Վարդերի փառատոնը: Վերջինիս անցկացման տեղանքը որոշվում է ըստ տարեթվերի. կենտ տարիներին անցկացվում է Կառլովո քաղաքում, իսկ զույգ տարեթվերին՝ Կազանլիկում: Բայց, երկու դեպքում էլ, հիմնական տոնախմբությունները սկսվում են Վարդերի հովտում, որտեղ և աճում են բուլղարական հայտնի անուշահոտ յուղի հումք՝ վարդերը:

Այստեղ ազգային հանդերձանքով կանայք հավաքում են վարդի թերթիկները, երգում ազգային երգեր և հյուսում ծաղկեպսակներ: Տոնակատարությունները շարունակվում են քաղաքում՝ ազգային երգ-երաժշտության ուղեկցությամբ, նկարիչների ու լուսանկարիչների ցուցահանդեսներով: Կազանլիկում փառատոնի մասնակիցները հնարավորություն են ունենում տեսնելու, թե ինչպես էին ստանում վարդի յուղը հին ժամանակներում, նաև համատեսելու բուլղարական հայտնի վարդի մուրաբան ու լիկյորը:

Արդեն մի քանի տասնամյակ է, որ այս փառատոնը դարձել է ոչ միայն բուլղարացիների կենսակերպի արտացոլանքը, այլև՝ մի ժողովրդի հոգևոր ու մշակութային ժառանգությունը:



Լրիվ անվանումը՝ Բուլղարիայի Հանրապետություն:
Մայրաքաղաքը՝ Սոֆիա:
Պետական կառուցվածքը՝ Պառլամենտական հանրապետություն:
Տարածքը՝ 111 910 քառ. կմ:
Բնակչությունը՝ շուրջ 7.6 մլն:
Պետական լեզուն՝ բուլղարերեն:
ԵՄ անդամակցությունը՝ 2007 թ.-ից:

Խորհրդարանական դոյակ

«Փարիզ Բալկաններում». մինչև 20-րդ դարի կեսերը հաճախ այսպես էին անվանում Բուխարեստը, քանզի քաղաքի լավագույն շինությունները, դոյակներն ու լայն պողոտաներն արտացոլում են 19-րդ դարի ֆրանսիական ճարտարապետության մոտիվները... Անցյալ դարի 80-ականներին այստեղ վեր է խոյացել այն ժամանակվա երկրի նախագահ Նիկոլայե Չաուչեսկուի ամենահավակնոտ նախագիծը՝ Հանրապետության դոյակը, որը հետագայում վերանվանվեց և կոչվեց «Խորհրդարանական դոյակ»...

Այս կառույցի համար տարածք ապահովելու պատճառով ավերվել է Բուխարեստի պատմական կենտրոնը. երկրի ղեկավարության անվարան որոշմամբ քանդվել են մի շարք պատմական հուշարձաններ, տասնյակ վանական համալիրներ, հրեական տաճարներ ու բողոքական եկեղեցիներ: 5 տարի կառուցվող դոյակն այսօր իր մեծությամբ աշխարհում երկրորդ վարչական շինությունն է Պենտագոնից հետո: Կառույցի ընդհանուր մակերեսը 350 հազար քմ է, բարձրությունը՝ 92 մ, ունի 12 հարկ, 1100 սենյակ-լսարան և 8 ստորգետնյա սրահ: Այն իր մեծությամբ գերազանցում է Քեոպսի բուրգը:

1989 թվականից ի վեր դոյակը Խորհրդարանի նստավայրն է, իսկ 2004-ից այստեղ է հաստատվել նաև Սենատը: Շենքում գործում է ապակեպատ վերելակ՝ զբոսաշրջիկներին ժամանակակից արվեստի թանգարան հասցնելու համար, կա նաև շքեղ ռեստորան՝ բացառապես քաղաքական գործիչների համար: Իր ողջ շքեղությամբ ու ծավալներով հանդերձ՝ այս կառույցը հակասական կարծիքներ է ծնում. այն լինելով 2-րդ խոշորագույն վարչական շինությունն աշխարհում՝ միևնույն ժամանակ դասվում է ամենաանճաշակ կառույցների շարքը:



Լրիվ անվանումը՝ Ռումինիա:
Մայրաքաղաքը՝ Բուխարեստ:
Պետական կառուցվածքը՝ Ռումինար կիսանախագահական հանրապետություն:
Տարածքը՝ 237 500 քառ. կմ:
Բնակչությունը՝ 21.5 մլն:
Պետական լեզուն՝ ռումիներեն:
ԵՄ անդամակցությունը՝ 2007 թ.-ից:

ԲԱՌԱՐԱՆ

- **Տարածաշրջանային կոմիտեն** (ՏԿ, անգլերեն հապավումը՝ CoR) ԵՄ անդամ պետությունների տեղական և տարածաշրջանային (տարածքային) կառավարման մարմիններին համախմբող քաղաքական ժողով է, որը հիմնադրվել է 1994 թվականին՝ Եվրոպական երկրների տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ընտրովի մարմիններին համաեվրոպական հարցերում արտահայտվելու հնարավորություն ընձեռելու նպատակով: Հանձնաժողովը և Խորհուրդը պարտավոր են խորհրդակցել ՏԿ-ի հետ տարածաշրջանների համար հետևանքներ ունեցող առաջարկների շուրջ, սակայն կոմիտեն կարող է նաև սեփական նախաձեռնությամբ կարծիքներ և եզրակացություններ մշակել, ինչը, փաստորեն, թույլ է տալիս այդ մարմինն հիմնախնդիրներ բարձրացնել ԵՄ օրակարգում: ՏԿ-ն ունի 344 անդամ և նույնքան անդամության թեկնածու, որոնք ներկայացնում են չորս քաղաքական խմբավորումների շահերը:
- **Եվրոստատը** Եվրոպական Միության վիճակագրական ծառայություն է, որի գրասենյակը գտնվում է Լյուքսեմբուրգում: Վերջինիս խնդիրն է ԵՄ-ին տրամադրել Եվրոպայի մակարդակով վիճակագրական բարձրորակ տվյալներ, որոնք թույլ են տալիս համեմատություններ անցկացնել երկրների և տարածաշրջանների միջև:

For more information please contact the Delegation of the European Union to Armenia
 21 Frik str, Yerevan, Armenia Entrance from Proshyan str.
 Tel.: (+374 10) 54 64 94, (+374 10) 54 64 95; E-mail: Delegation-Armenia@ec.europa.eu; <http://ec.europa.eu/delegations/armenia>; <http://eunewsletter.am>
 The Newsletter is prepared by SHARM Holding

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Եվրոպական միության պատվիրակությանը Հայաստանում
 Հայաստան, Երևան, Ֆրիկի փողոց, 21, (մուտքը Պռոշյան փողոցից)
 Հեռ.՝ (+374 10) 54 64 94, (+374 10) 54 64 95, էլ. փոստ՝ Delegation-Armenia@ec.europa.eu, <http://ec.europa.eu/delegations/armenia>; <http://eunewsletter.am>
 Հաղորդագիրը պատրաստել է ՇԱՐՄ Հոլդինգը